



հայաստան համահայկական հիմնադրամ  
The Armenia Fund



ԳՅՈՒՂԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ  
Rural Development Program

ԱՄՍԱԹԻՎ.  
ՈՒՄ ԿՈՂՄԻՑ.

Փետրվարի 29, 2008 թ.  
Գյուղական զարգացման ծրագրի  
գրասենյակ

ԽՈՐԱԳԻՐ.

«Հայաստան» համահայկական հիմնադրամի  
Գյուղական զարգացման ծրագրի շաբաթական  
գեկույց

Այս շաբաթ մենք կանդադրադադանք Շվեյցարիայի զարգացման եւ համագործակցության կազմակերպության, ինչպես նաեւ Սփրինգֆիլդ զարգացման կենտրոնի հետ մեր ունեցած հանդիպմանը: Մենք ստեղծել ենք նաեւ մեր շաբաթական գեկույցների մի նոր բաժին, որտեղ գյուղական կյանքը եւ առկա խնդիրները ներկայացվում են թվերի տեսքով: Երբեմն թվերը կարող են բառերից ավելի հստակ ներկայացնել առկա խնդիրները:

Մենք թարմացրել ենք նաեւ մեր տեսանյութերի բաժինը նաեւ տեսանյութին վերաբերվող մի շարք հարց. բոլորը սիրում են երկաթուղի նստել այդպես չէ՞, դուք կնստե՞իք այս գնացքը: Դուք կսպասե՞իք ամեն օր չջեռուցվող կայարանում այս գնացքի գալուսն առանց համոզված լինելու, որ այն երբեւիցե կժամանի՞:



Սա այն երկաթուղին է, որը սպասարկում է Շիրակի մարզի բնակիչներին: Այն չի վերանորոգվել ավելի քան քառասուն տարի եւ գնացքի վրա դեռեւս կարելի է տեսնել սովետական միության խորհրդանիշները:

Այլ նորություններ՝

- Այսօր բեռնափոխադրող օդանավով Երեւան հասավ երկու կթի ավտոմատ ագրեգատները, որոնք պետք է փոխանցվեն սահմանամերձ գյուղերի բնակիչներին:



- Այսօր ավարտվեց Ազատամուտ համայնքի գրադարանի վերանորոգման աշխատանքները: Վերանորոգման աշխատանքներին կամավոր կերպով ակտիվորեն մասնակցում էին նաեւ համայնքի աշակերտները: Նոր գրքերի առաջին կապոցը արդեն հասել է գյուղ: Շուտով կուղարկվեն նաեւ գրադարանի համար նոր կահույքը, ինչպես նաեւ բազմաթիվ այլ գրքեր:
- Շաբաթ օրը բեռնափոխադրող ընկերությունը Լոռի փոխադրվեց դպրոցական կահույքի այն մասը, որը դեռեւս չէր տեղափոխվել:

### Ենթակառուցվածքներ եւ տնտեսությունը, ո՞րն է առաջնայինը

Ս.թ. փետրվարի 28-ին «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն պարեն Վահե Աղաբեկյանցը եւ Գյուղական զարգացման ծրագրի աշխատակազմը հանդիպեց Շվեյցարիայի զարգացման եւ համագործակցության կազմակերպության տարածաշրջանային գրասենյակի տնօրեն Դերեք Մյուլլերի, SDC-ի Հայաստանյան գրասենյակի պատասխանատու Չառա Ալլահվերդյանի եւ Սփրինգֆիլդ զարգացման կենտրոնի մասնագետ Դեյվիդ Էլլիոթի հետ: Հանդիպմանը հատուկ շեշտադրում դրվեց Գյուղական զարգացման ծրագրի կողմից իրականացվող ծրագրերի ներկայացմանը, ինչպես նաեւ նպատակ ունեւր քննարկվեց երկու կազմակերպությունների միջեւ համագործակցության հնարավորությունները:



SDC-ին եւ «Հայաստան» համահայկական հիմնադրամը արդեն համագործակցում են Տավուշի մարզի Խաչթառակի միկրոշրջանի համայնքներում անասնաբուժական ծառայության բարելավման ծրագրի շրջանակներում: Հիմնադրամի կողմից ավելի քան հարյուր սահմանամերձ համայնքներում իրականացվելիք աշխատանքները մեծ հնարավորություն են ընձեռում ընդլայնել համագործակցության

շրջանակները եւ համատեղ ուժերով լուծում գտնել առկա խնդիրների համար:

Հանդիպման ընթացքում քննարկված համագործակցության բնագավառներից մեկը Գյուղական զարգացման ծրագրի տնտեսական աջակցության բաղադրամասն էր: Դա «Հայաստան» համահայկական հիմնադրամի համար հանդիսանում է համեմատաբար նոր ուղղություն, քանի որ մինչեւ Գյուղական զարգացման ծրագրի մեկնարկը Հիմնադրամը հիմնականում իրականացրել է ենթակառուցվածքների վերականգնման ծրագրեր:

Կարող է կարծիք լինել, թե շեղումը աշխատանքի հիմնական ուղղվածությունից սխալ է, սակայն նոր ժամանակները ասպարեզ են բերում նոր մարտահրավերներ: Այսօր Հայաստանում միայն ենթակառուցվածքների վերականգնումը չի կարող ավելի լավ կյանք ապահովել սահմանամերձ համայնքում ապրող բնակչի համար:



Եթե տնտեսական զարգացումը ենթակառուցվածքների վերականգնմամբ չգուզակցվի, այն ուղղակի կնպաստի գյուղացիների ավելի արագ կերպով գյուղից հեռացմանը: Կամ համայնքի գազիֆիկացումը ինչ օգուտ է կարող տալ եթե բնակիչները միջոցներ չունեն դրա դիմաց վճարելու համար:

Այդ իսկ պատճառով տնտեսական զարգացման նախաձեռնությունը հանդիսանում է «Հայաստան» համահայկական հիմնադրամի Գյուղական զարգացման ծրագրի առաջնային ծրագրերից մեկը: Սա նաեւ այն բնագավառն է, որտեղ SDC-ի եւ Սփրինգֆիլդ կենտրոնի մասնագետները կարող են աջակցել շրջանի զարգացման մարտավարության մշակման գործում, ինչպես նաեւ օգնել տնտեսական գաղափարների կյանքի կոչման գործում: Այս տնտեսական ծրագիրը, որոշակի փոփոխություններից հետո կարելի է օգտագործել ծրագրում ընդգրկված համայնքների մեծ մասի համար: Խաշթառակի փորձնական միկրոշրջանում աշխատելու ընթացքում ձեռք բերված փորձը կարող է հիմք հանդիսանալ այդ մարտավարության ձեւավորման համար:

### Սահմանամերձ համայնքները թվերով

Այս բաժնում թվերի տեսքով ներկայացված են այն խնդիրները, որոնք առկա են սահմանամերձ համայնքներում բնակվող գյուղացիների ամենօրյա կյանքի վրա:

## 2

Երեւանից 150 կմ հեռու գտնվող Տաշիր (Լոռու մարզ) հասնելու համար պահանջվող ժամանակ

## 1.5

Տաշիրից 10 կմ հեռավորության վրա գտնվող սահմանամերձ Ձյունաշող համայնք հասնելու համար պահանջվող ժամանակ

## 3

Ձյունաշող համայնքի հեռավորությունը պետական սահմանից



## 1225

Իսահակյան համայնքի բնակիչների թիվը (Շիրակի մարզ)



1

Համայնքի խմելու ջուրը ապահովող ջրատարի քանակը

0.5

Իսահակյան համայնքի բնակչի մեկ օրվա հասանելիք լիտր ջուր



2049

Խաշթառակի միկրոշրջանի վեց համայնքներում բնակվող բնակիչների

891

Կովերի թիվը Խաշթառակի միկրոշրջանում

0.43

Յուրաքանչյուր ընտանիքին հասնող կովերի թիվը Խաշթառակի միկրոշրջանում, որտեղ անասնապահությունը դիտվում է որպես տնտեսական վերականգնման հիմնական ուղղվածություն



1,000,000

Այն խնդիրների թիվը, որոնք ծառայած են Հայաստանի սահմանամերձ համայնքների առջեւ

1

Սահմանամերձ գյուղերում կյանքը բարելավելու համար անհրաժեշտ մարդկանց թիվը